Առավոտ
29/ 03/2010
aravot.am Օրաթերթ

English | Русский | Հայերեն | Գլխավոր | Մեր մասին | Աշխատակազմ | Հետադարձ կապ

Գլխավոր
Նորություններ
Քաղաքականություն
Սոցիում
Կրթություն
Մշակույթ
Սպորտ
Առողջապահություն
Տնտեսություն
Իրավունք
Մարզեր
Միջազգային
Հայդ պարկ
Ժամանց
RSS 2.0

Կրթություն

2010-03-20

# Վարժարանի փոխարեն՝ նորը

Կիպրոսի նախկին Մելքոնյան վարժարանի հիմքի վրա անհրաժեշտ է ստեղծել բարձրորակ, նյութապես ամուր եւ առողջ կառավարման համակարգ ունեցող համահայկական դպրոց: Ըստ «Նոյյան տապանի», երեկվա ասուլիսում այսպիսի հայտարարությամբ հանդես եկան համահայկական դպրոցի հիմնման նախաձեռնող խմբի անդամները: Նրանցից մեկը՝ Մեսրոպ քահանա Արամյանը, նշեց, որ այսօր դարաշրջանի շնչին համապատասխան հայկական կրթօջախներ չկան, եւ, փաստորեն, ողջ աշխարհով մեկ սփռված հայ ժողովուրդը մեկ ընդհանուր կրթական ծրագիր չունի: «Մենք պետք է իմանանք՝ ինչ ենք փոխանցելու եկող սերունդներին»,- ասաց նա, հավելելով, որ պատմության մեջ հայ ժողովուրդը մշտապես ապավինել է գիտելիքին եւ հոգեւոր արժեքներին:
Մեսրոպ քահանա Արամյանը հայտնեց, որ 2005թ.-ին փակված Մելքոնյան վարժարանի շենքը, որը պատկանում է Հայ բարեգործական միությանը, ներկայումս հանվել է վաճառքի: Նրա խոսքերով, նախաձեռնող խումբը պատրաստ է բանակցություններ սկսել միության հետ, որպեսզի շենքը շարունակի օգտագործվել զուտ կրթական նպատակով: Նախաձեռնող խմբի անդամ, Շվեյցարիան ներկայացնող Արդեն Ճելեֆյանը չբացառեց, որ վաճառվելու դեպքում շենքը կարող է վերածվել հյուրանոցի կամ շահույթ հետապնդող ինչ-որ օբյեկտի, ինչը անթույլատրելի է: Նրա խոսքերով, այդ շենքի տարածքում հայկական շունչ կա, տեղադրված են հայ գործիչների արձաններ: Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ համահայկական դպրոցը պետք է հիմնվի Կիպրոսում, այլ ոչ թե Հայաստանում, նախաձեռնող խմբի անդամ, Կիպրոսը ներկայացնող Մարտիրոս Մինասյանն ասաց, որ այդ երկրում հայերի իրավունքները եւ արեւմտահայերեն լեզուն պաշտպանված են

ՆԱԽՈՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ

2010-03-19
**ԱՅՍՕՐՎԱ ԴՊՐՈՑԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ԱՅՍՕՐՎԱ ԾՆՈՂԻՆ**
Մեկ-երկու էլիտար դպրոցով կրթական համակարգի բարեփոխման խնդիր չի լուծվի Երաշխավորված առաջընթաց ունեն այն երկրները, որտեղ զարգացած է ...

2010-03-19
**Կենգուրուի «զգեստներով» եւ ոգեւորությամբ**
Այսպես դիմավորեցին հայ երեխաները «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթը Հայաստանում երեկ մեկնարկել է ...

2010-03-19
**Զոեսություն եւ ա-խոսություն**
Լեզվաբան Ռուբեն Սաքապետոյանը՝ վտանգված մայրենիի մասին «Ապե, ապերո, քուրո... Գրական՝ պարոն, տեր, տիկին, տիար-ների փոխարեն մարդիկ ...

ՄՈՒՏՔ

ՓՆՏՐԵԼ

ԱՐԽԻՎ

| Երկ | Երք | Չրք | Հնգ | Ուրբ | Շբթ | Կիր |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 29 | 30 | 31 | | | | |

2010

ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| **Երեւան** | +8 | -2 |
| **Շիրակ** | +2 | -11 |
| **Արարատ** | +9 | -2 |

ՏԱՐԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| USD | -- |
| EURO | -- |
| RUR | -- |

ԳՈՎԱԶԴ
www.aravot.am
(old site)
CIRCLE.AM TOP ARMENIAN
ZX ԳԱՐԱԺ

ամենաբարձր մակարդակով: Նույն հարցի առնչությամբ Ա. Ծելեֆյանը նշեց, որ Կիպրոսը հարմար է նաեւ աշխարհագրական առումով. այնտեղ կգնան սովորելու թե՛ Եվրամիության, թե՛ Միջին Արեւելքի երկրներում բնակվող հայերի երեխաները: Իսկ Մեսրոպ քահանա Արամյանը շեշտեց, որ պետք է ձգտել զարգացնել սփյուռքյան կառույցները, քանի որ Սփյուռքի հզորությամբ է Հայաստանը ուժեղ: «Այսօր թուրքերը Ֆրանսիայում դպրոցներ են բացել եւ ֆրանսիացիներին թուրքերեն լեզուն ու մշակույթն են ուսուցանում»,- ասաց նա՝ նշելով, որ հայերը եւս պետք է հայկական կրթօջախներ ունենան արտասահմանում:

**Բոլոր Նյութերը** >>>

---


2010-03-18

**ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՎԱՂՈՒՑ ԱՆՑԵԼ ԵՆ**

Իսկ մենք դեռ խոսում ենք բուհերի՝ որակի ապահովման գործընթացի «ա» ու «բ»-ից Կրթության որակի ապահովման գործընթացներին ...

2010-03-18

**Ասա ինչպես ես պահում գրադարանդ, ասեմ ով ես դու**

Գրադարանավարները հաճախ են բողոքում, որ համայնքի շատ ղեկավարներ անուշադրության են մատնում իրենց տարածքում գործող գրադարանները: ...

2010-03-18

**Անբաժանելի՝ բնությունից ու կանանցից**

Երեկ Հայաստանի նկարիչների միությունում բացվեց Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն, ճանաչված նկարիչ Փարավոն Միրզոյանի հոբելյանական ...

2010-03-18

**39 400 ԵՐԵԽԱ ԵՎ «ԿԵՆԳՈՒՐՈՒ»**

Այսօր կանցկացվի «Կենգուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթը, որը տարեցտարի ավելի լայն մասսայականություն է ստանում ...

2010-03-17

**ԲՈԼՈՆԻԱՆ, ՄԵՆՔ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ**

Հայաստանը կիսամանախագահի Բոլոնյան գործընթացը, ԵՊՀ ռեկտորն էլ դեռ կպաշտոնավարի Երեկ ԿԳ նախարարությունում տեղի ունեցավ «Բոլոնիայի ...

2010-03-17

**«Բոլորս մանթո ենք»**

Հանրային խորհուրդը՝ «Մոսկվա» կինոթատրոնի






AD BOOK

այստեղ կարող է լինել Ձեր գովազդը



ՎԵՊ

**ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆ**



**ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Գիրք առաջին

Գիրք երկրորդ

Գիրք երրորդ

Գիրք չորրորդ

Գիրք հինգերորդ

Գիրք վեցերորդ

Գիրք յոթերորդ

Գիրք ութերորդ

**ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ**

**Գլուխ առաջին**

**Գլուխ երկրորդ**

**Գլուխ երրորդ**

**Գլուխ չորրորդ**

**Գլուխ հինգերորդ**

**Գլուխ վեցերորդ**

**Գլուխ յոթերորդ**

**Գլուխ ութերորդ**

ամառային դահլիճի քանդման մասին «Քանի ուշ չի, պիտի հետողորմյա անեն»,- այս կարծիքին ...

2010-03-17

## «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը` Վանաձորում

«ՎիվաՍել- ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն օրերս այցելել է Վանաձորի պետական մանկավարժական համալսարան: ...

2010-03-17

## Գոմաձորը` գրքում

Լույս է տեսել բազմափորձ մանկավարժ, բանասեր Համլետ Ահարոնյանի «Գոմաձոր-Հայրենագիտական» գիրքը: Այն Սեւանա ավազանի, տեղի ...

2010-03-17

## Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ` ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Երեկ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում տեղի ունեցավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական եւ Երեւանի պետական ...

2010-03-16

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԱԿԱՍՈՐԴՈ՞Վ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ

Պատճառը չտարբերակված ֆինանսավորումն է Օրերս Երեւանի թիվ 118 դպրոցում տեղի ունեցավ ՀՀ 48 ավագ դպրոցների տնօրենների խորհրդակցություն: Թիվ ...

2010-03-16

## Աղանդավորները շատացել են

Իսկ նրանց հնարավոր չէ օրենքով ճնշել Քայքայիչ պաշտամունքներից տուժածների օգնության եւ վերականգնման կենտրոնի տնօրեն Ալեքսանդր ...

2010-03-16

ՆՈՐԻՑ «ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ» Երեկ կայացավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի մամուլի ասուլիսը` նվիրված «Մեկ ազգ, մեկ ...

Գլուխ իններորդ
Գլուխ տասներորդ
Գլուխ տասնմեկերորդ
Գլուխ տասներկուերորդ
Գլուխ տասներեքերորդ
Գլուխ տասնչորսերորդ
Գլուխ տասնհինգերորդ
Գլուխ տասնվեցերորդ
Գլուխ տասնյոթերորդ
Գլուխ տասնութերորդ
Գլուխ տասնիններորդ
Գլուխ քսաներորդ
Գլուխ առաջին
Գլուխ երկրորդ
Գլուխ երրորդ

Առավոտ